հեռացաւ կորաւ յանդունդ յաւիտեան :

**Ը**լլայ ըուն անեղ՝ լրյսս երրորդուն ,  
ըուս ցաթօղ՝ որոնց՝ են իմ սիրական .  
արթնցիր իմ ֆառքս՝ լրյս առաւօտեան ,  
նոր ցորեկ , առանց՝ իրկուն , յաւիտեան :

**Պ**էտ չէ ըստեղծել՝ հիմա ուրիշ բան ,  
ոչ փոփոխական՝ բաներ զանազան .

պէտքը չէ ճրագ , լրյս արեղական ,  
ես իմ սիրելեացս՝ հերիք լրյս կըլլամ :  
**Ա**յս է իմ հանգիստ՝ յաւիտենական ,  
որ ձեղի ըլլամ՝ հանգիստ յաւիտեան .  
վայլեցէք տէօվլէթս՝ անբաւ մենծութեն ,  
դուք էք իմ զաւակքս՝ մէրասխօր միայն :

Օրհ .

Օրհնած զաւկըներ՝ մէկ հօր աստուծոյ,  
օրհնած ախպըրներ՝ միածին որդւոյ .  
օրհնած դուք հարսեր՝ մեր հոգւոյն սբեյ,  
օրհնենք միշտ տուէիք՝ մէկ երրեակ լուսոյ :  
Երկնային ասկէր՝ առջինեկ զաւակք,  
մարդկային ազգեր՝ պղտիկ, որ մեծցաք .  
մի հօտ՝ մի հովիւն՝ եղաք հաւասարք,  
մարդ եղած որդիս՝ աս բանիս պատճառք :

Որդին ած :

Եկէք իմ պարծանքս՝ որդիք փրկուն,  
հօրըս քով, պատունով ձեր որդիուն .  
լոյս առեք իրմին՝ պայծառ տեսուն,  
լոյսը՝ լոյս կուտայ՝ միշտ իմաստուն :  
Վերէք կշտացէք, տեսէք՝ թէ որքան,  
անուշ ու քաղցր է՝ այ սեղան .  
Հնորքն էր համաես՝ իր ողորմուն,  
հիմա բուն փառքն է՝ մշճիս դիտուն :  
Աս ան սեղանն է՝ նը արքայութեն,  
որ ձեղիսօք տուաւ՝ նը աւետարան .  
աս սիրոյ բաժակ՝ սաֆի, աննման,  
որ ձեր հետ խմել՝ դրի ես պայման :  
Պատունիրան պահօղք՝ կատարեալ սիրով,  
հոս տեղ մեծարուիք՝ կատարեալ պատուով .  
երեսնիդ ձերմակ՝ ելաք նը վարքով,  
նը երրորդունս՝ կշտացէք տեսքով :  
Աս է նը սրտից՝ պարդև եղական,  
որ հոգւոյ աչքով՝ զած միշտ տեսնան .  
մաքուր մարմնոյն ալ՝ ըստ իւր բնութեն,  
ուզածն է, տեսնալ՝ իս մարմնացեալ բան :  
Խորհուրդն ալ՝ ամ էր՝ իմ մարդեղուն,

որ թէքմիւ ըլլայ՝ փափաք տեսուն .  
նշան կատարեալ բարեկամուն ,  
աս է՝ որ իրար՝ երեսնին տեսնան :

Հոգին նի ած :

Ես գուրդուրալով՝ ստեղծման ատեն ,  
երեցայ ժուռ գալ՝ զրի վըրայէն .

մօր պէս ալ ծնայ՝ նը աւազանէն ,  
ընտրած զաւկըներ՝ ձեզ այն նը ջրէն :

Մազլոմ կէօվէրձինս՝ մաքուր թևերով ,  
պէսլէմիշ ըրի՝ աղէկ՝ իմ շըով .

հոս ալ փայփայեմ՝ անարատ սիրով ,  
յաւիտեան հարանիք՝ ձեզ ընել տալով :

Տեսաք , ի՞նչ պտուղ՝ ըրաւ իմ բերան ,  
որ ձեզ աղօթքի՝ կորդորէր անձան .

տեսաք պտղըներս՝ առաքինութեն ,  
անանկ համով բան՝ որ աշխարք չիկան :

Տես , խաղաղութեն՝ մտաք իլիման ,  
հետն ուրախութիւն՝ միշտ երանուն .

Տեղութի հոգւոյ , և սէր միաբան ,  
բուն սէրն այ , որ է ամմէն բան :

Տեսաք իրեք լոյս՝ մէկ աշեգական ,  
չէ թէ օրինակ , հապա իսկական .

հասկըցաք , ած՝ ընտո՞ր է մենծ բան ,  
ան՝ որ հասկըցաւ՝ ձեզ առաջ յինքեան :

Տեսաք՝ որ ըրաւ՝ իր խօսքը լըման ,  
որ տայ ձեզ պատիւ՝ այ նման .

զինքը տեսնալով՝ որ է աննման ,  
զըեց յովհաննէս , կըլլանք իր նման :

Փառաբանութ սից :

(Օրհնենք օրհնենքով՝ զած մէր և տէր ,

Ես կոյս Սարփամ՝ կը լսամ գլուխ ձեր .  
օրհնենք զան, որ միշտ փառաւորած էր,  
իր բարձր փառքով՝ անկարօտ մեր առ :  
Կարդանք յաղթուե՛ իրեն նոր երգեր,  
միշտ կեանք կենդանի՝ իժիր յաղթող առ .  
տեսանք, իր ձառքով՝ ըրաւ մենծ բաներ,  
հոս միշտ կը տեսնենք՝ դէմքն ալ խելքէ վեր :  
Երգենք մարդկանց հետ՝ մեք ալ Տրեշտակներ,  
ած զօրուեց՝ սր սր սր ես տէր .  
քու փառքով լեցուն՝ բոլոր երկինքն էր,  
որ եղաւ մեզի՝ նոր աշխարք՝ ի վեր :  
Երկրպագութիւն՝ կը նենք միաբան,  
լեցուն գոհբերան՝ սր երրորդուե .  
օրհնեալ ես քեզնէ՝ ընտոր է արժան,  
քեզնով՝ քեզ օրհնել՝ մենք եղանք արժան :  
Սորանց միշտ կրկնենք՝ անդադար քեզ ձան,  
դովասանք և փառք՝ տալով յաւիտեան .  
խորունկ խորհուրդներ՝ քուկին բարձրուե ,  
ալ յայտնի եղան՝ ի խոնարհուե :  
Ոչնչէն ըրիր՝ որչափ եղած կան,  
մեզ ալ ընտրեցիր՝ որդիք սիրական .  
մենծ խորհուրդ՝ եղաւ՝ սր մարդեղուե ,  
հոգւոց և մարմնոց՝ պատիւ մենծուե :



## ԶԻՆՆԵ Թ. Բ:

**Մայլելը արդար հոգիներուն՝ ներսի  
ուրախութենով։**

## Մարտէն։

**Ա**վարմանալի՝ կեանք կենդանուե՛,  
ապրիլ ու մայլ միշտ յարջայուե՛.  
ուր ինքըն մեր առը՝ մեր սրտին վախճան,  
է արքայուե՛ մազի անվախճան։  
Գիտէինք, ած՝ սէր է աննման,  
հիմածուկ տեսանք՝ իր սէրը լըման։  
աս ի՞նչ մայլելու՝ բան ուրախուե՛,  
սիրու մէջ թաղումիլ անբաւ յաւիտեան։  
Հիշ չի տեսնընած՝ ու չի լըսուած բան,  
մարդու սիրու ընկած, մէյէր աս է ան։  
որ մեզ պատրաստեց՝ մեր հայր սիրական,  
առ և թագաւոր՝ փրկիչ և իշխան։  
**Ա**մ և սէր, ծով անհունութե՛,  
ամմէն բաղձանքիս՝ սէլը քեզ հասան։  
ուղածըս գտայ՝ լեցուն բաւական,  
մէյ մալ չեմ թողուր՝ ըզքեզ յաւիտեան։

## Հըւշաներ։

**Ա**նհուն՝ այ՝ ծովիս մենծուե՛,  
խորունկ խորունկի՝ ուրախ ձան կուտան։  
քանի որ եղաւ՝ աշխարք՝ ի սկզբան,  
մեր ստեղծողին՝ երեսն ենք հէյրան։  
**Մ**այլեր ենք՝ անչափ՝ իր գեղեցկուե՛,  
հար.

Հարբեր Ենք՝ ըսենք , տեսքով աննման .  
պատմելու բան չէ , է վայլելու բան ,  
տեսեք , ի՞նչ տեսաք , նոյն է յաւիտեան :

Մարդիկ :

Հաքկա , մաշալահ , աս աղուորուեն ,  
որ ինք կը մարփիլ՝ որն արեգական .  
լուսի մէջ նստած՝ ահաւորուեն ,  
լուսեր կըցաթէ՝ երկնաւոր արքայն :  
Անթիւ աստղներ՝ սբց բազմուեն ,  
այ դէմքին՝ լուսէն կըլուսնան .  
ով կըրնայ պատմել՝ անպատմելի բան ,  
հերիք է վայլել՝ ըսենք միաբան :

Հրեշտակներ :

Չափ մը իմացա՞ք՝ ով որդիք մարդկան ,  
անչափ մենծուեն՝ ոք ածուեն .  
աչքէ անցուցի՞ք՝ խորք իմաստուեն ,  
բերաննիդ դրի՞ք՝ աղբուր դիտուեն :  
Սըռերուն մատք՝ որ խոր պահուած կան ,  
անբաւ խորքին մէջ՝ խորհուրդի սըրան .  
Էվալահ ըսի՞ք՝ իր ածուեն ,  
ի՞նչ անուն տրբւի , չէ՞ մի անսահման :  
Մարդիկ :

Տեսանք բովանդակ՝ որչափ կերենան ,  
չէ նէ , չափ չունի՝ ծով ածուեն .  
չը սուիր , ասանկ է , պյապէս , և այսքան ,  
ողջաձև ընել՝ չըլլար մենծուեն :

Ամենակարօղ՝ շ կարողուեն ,  
ծայր է ծայրագոյն՝ կատարելուեն .  
ըսելու մեր խօսք՝ հատան պակսեցան ,  
ստոյգն ըսելու՝ իրեն զինուեն :

Հրեշտակ

Հրեշտակներ:

Հիմաձուկ եղաք՝ բուն ածաբան,  
դրոց աշակերտ՝ վերին դիտուեն.

Ինչ որ կարդայիք՝ աշխարքի վըրան,  
կաթիլ մը նալ չեր՝ աս իմաստուեն:

Թաղ որ՝ հոս, դիտունք՝ տգէտք մէկ սըրան,  
առանց դիր՝ ամմէն՝ բանը կը կարդան.

Երնէկ անոնց որ՝ սէր շատ սորվեցան,  
վարպետ կարդացօղ՝ են արքայուեն:

Մարտին:

Մենք ալ արմբնցանք՝ խիստ ատոր վրան,  
ի՞նչ կարդով սբեր՝ վարուվեր նստան.

պազին որ խապար չէին՝ դպրատան,  
հոս պատին առին՝ շատ վեր աստիճան:

Բայց կը ճանչնայինք, ու ճանչցանք լըման,  
որ սիրով վառած՝ կեանք մը ունեցան.  
նախանձ որ ըլսար՝ հոս, ըսել արժան,  
ինչու վեր չելանք՝ սիրու աստիճան:

Հրեշտակներ:

Ահա ատ է եա՝ հիանալու բան,  
չիկայ հոս նախանձ, ոչ սէր անձնական,  
ամմէն մէկերնին՝ այնքան կըխրնտան,  
որքան որ ուրախ՝ են սբք ամենայն:

Մէկ թօփէ կտրած՝ հագուստ բազմուեն,  
ամմէնուն պօյին՝ չափած է կապան.  
թագաւորական՝ սազած է սուֆրան,  
իշտահնուն կեօրէ՝ ամմէնքը կերան:

Մարտին:

Հոս որ բուն տեղն է՝ զուտ ճշմարտուեն,  
ձեղ մենծ ախպարներ, հարցընենք մէկ բան՝  
անձ

Առայսուն սէյիրը . ձ :

107

բժ մարդ եղաւ՝ նէ, մեզի նման,  
չմ նախանձեցաք՝ մի, որդւոցս մարդ կան:  
**Մէյմալ** աս տեղս որ, է կարդ դերբնական,  
մեղնէ պաղիներ՝ ձեզմէն ալ վեր կան.  
թագուհին երկնից՝ չեմ դներ սըրան,  
**Մկրտիչ**, Յովսէփ, և անոնց նման:

Հրեշտակներ:

Առակով նախանձ՝ յարմար մեր վըրան,  
բայց առանց նախանձ՝ բան ճշմարտուն,  
թագաւոր մտնայ՝ թէպտիլ կերպարան,  
սարայլըն ալ վար, չիկայ զիան:  
**Դրսէն** ալ կըլայ՝ մանսուալի վրան,  
ներս չիգտնըւած, վէզիր ու փաշան.  
չըլսար նախանձիլ՝ բանի տրուն,  
ինչ կարդ որ դնէ՝ էն վերին իշխան:

Զ Ի 'Ն 'Ն Ե Թ . Գ :

Քնի մարմնոյն փառքը՝ իր **Մօրը**  
հետ:

Արամ:

**Փառք** կուտամքեղի՝ միշտ լեցուն բերան,  
թագաւոր փառաց՝ երկնքիս խորան.  
որ ինծ առջի հօր՝ փառք ես յաւիտեան,  
ով սիրուն զաւակ՝ մոր միանդամայն:  
**Առիր** հողեղէն՝ մարմինս աղամեան,  
վերառիր քու հետդընկածս շատ տարունան  
մարմ

մարմնոյդ նայելով՝ փառաւորուե՛,  
հոգիս կը ճշխայ՝ մայլած յաւիտեան:

## Աբրահամ:

Որո՞ւ տանք գովեստ, ըսէ, հայր աղամ,  
որ զայս մեզ տուաւ՝ թագաւոր փարթամ.  
իսայիլ չենք քուկին՝ այն առջի անկման,  
բայց ան մեզ Ճարեց՝ զայս գանծ աննման:  
Տէյինտի օրհնենք՝ զօրհնեալ մեսիան,  
որ մեզ վեր հանեց՝ ասանկ աստիճան.  
ինծալ մեծ պարծանք՝ փառք պատիւ եղան,  
որ հայր եմ եղեր՝ պտղոյս օրհնուե՛:

## Մովսէս:

Հիմա իմացայ՝ միտքը իմ տեսլեան,  
երբ կը ցանկայի՝ ածտեսուե՛.  
ծակէ, մը տեսայ՝ լուս մը, աղուոր բան,  
կը ոնակս է՝ ըսաց՝ որ, պայծառ ասքան:  
Հոս տեղս որ եկայ, ցցուց իսկական,  
բուն երեսի կողմ՝ լուս անքննական.  
երեա կիմացուի՝ փառք ածուե՛,  
կոնակ ըսածն ալ՝ նշան մարդկուե՛:

## Պօղոս:

Ես ալ տեսանօղ՝ տեսայ քեզ նման,  
հրաշալի տեսիլ՝ յափշտակուե՛.  
բայց հարեւանցի՝ չէշնի մը նէր ան,  
աւելի ծարաւ՝ բերաւ փափաքման:  
Հիմա է ատեն՝ վայելու, լըման,  
կշտանանք, բայց չէ կշտանալու բան.  
միածնին երեսն՝ ըլլալով հէյրան,  
ըստ բուն էուե՛ և մեր բնուե՛,

Պետք . յովհ . յակ :

Մենք աւ իրաւ . որ՝ յայլակերպուն ,  
տեսանք՝ ի մարմնի՝ լոյս ածուն .  
անանկ որ , թմրած՝ ի ըզգայուն ,  
կուզէինք մնալ՝ միշտ լերան վրան :  
Հիմա ի՞նչ ըսենք՝ բուն արեդական ,  
որ կայ բարձրնցած՝ երկնքին օրթան .  
աս ի՞նչ գեղեցիկ՝ տեսք աղուորուն ,  
աս ի՞նչ խելքէ վեր՝ բան գեղեցկուն :

Մահտաղնային :

Խաչ ելած Յ՛ս՝ սէր իմ սիրական ,  
ի՞նչ աղուոր տեսայ՝ քեզ օր յարուն .  
բայց աղուորուն՝ որ կայ հիմակունան ,  
ըլլար կշտանալ՝ բնաւ յաւիտեան :  
Ի՞նչպէս գունըզգուն՝ քանց գօտի երկան ,  
ըռինո ես հագեր՝ անկար պատմուժան .  
որչափ գեղեցիկ՝ վէրքըդ կերևնան ,  
մէյ մէկ ճէվահիր՝ անդին պատուական :

Մարտիրոսնէր :

Ընտո՞ր աննման՝ թագ ածուն ,  
փայլի կոր փըրկիչ՝ նը գլխուդ վրան .  
Եախուտ ու զիւմիւթ՝ եղեր են նման ,  
փշէ պսակիդ՝ տեղուանք նը արեան :

Մեր սիրտն ալ՝ դիտես , ընտո՞ր կը ճըխան ,  
որ մէյ մէկ կաթիչ՝ եղանք քու արեան .  
թագաւոր՝ մերին՝ մարտիրոսուն ,  
կենդանի մնաս՝ ողը կենդանուն :

Քահանանէր :

Քահանաներուս՝ գլուխ պատուական ,  
դու դառն այ՝ երկնաւոր չօպան .

Դլուխ

դլուխ օծելոց , մեռոն դադաթան ,  
օծեալ նք իւղով՝ քու ածութե :

Ըուրջառ հագնելով՝ առած մարդկուե ,  
պատարագ ըրիր՝ հէմ եղար խուրպան .  
հիմա քահանայք՝ եղեր ենք հէյրան ,  
աս քու հրաշափառ՝ կարդիդ կատարման :

## Աշքբներ :

Ով հայր աղքատաց՝ խղճալի մարդկան ,  
կամաւոր աղքատ՝ որ հարստուե .  
ի՞նչպէս կը փայլիս՝ փառօք աննման ,  
ճշմարիտ խաղնայ՝ ստոյդ մեծուե :

Մեղ պարծանք եղար՝ և փառքյաւիտեան ,  
աղքատ որ եղար՝ դուն մեզի նման .  
որչափ մենծ պատիւ՝ և հիմա աս ըան ,  
որ ըզմեղ ըրիր՝ քեզի հոս նման :

## Տղաք :

Մեզի ալ քեզմով՝ մենծ փառք էւելցան ,  
մանուկ որ եղար՝ ածդյաւիտեան .  
արունովտ ծնանք՝ ՚ի որ աւազան ,  
արդունքովտ հասանք՝ կատարելուե :

Աղօնորիկ տղայ՝ եղար աննման ,  
տահա աղուորցար՝ տարիքդ որ մենծցան .  
հիմա ի՞նչ ըսենք՝ հոս յարքայուե ,  
տեսքիդ որ հրեշտակք՝ եղեր են հէյրան :

## Եւայ :

Մէյմալ նայեցէք՝ ՚ի կոյս Մարիամ ,  
լուսընկայ աղօնոր՝ մայր արեգական .  
պարծանք ու պսակ՝ աղջիկս աննման ,  
որ ածածին՝ իր մօր դաւազան :

Հատ զաւակ տեսայ , խաղնա շահեցան ,

Աւրայուն սեյիրը . գ : 111

Նը կոյս Մարիամ՝ ինքն է իմ խաղնան .  
աջ դին է նստեր՝ մօտիկ առ արքայն ,  
և անոր նման՝ կը փայլի միայն :

Յովաչիմ, անհա :

Այս սիրուն զաւակ՝ պտուղ օրհնուն ,  
օրհնեալ՝ ի կանայս՝ պսակ կուսուն .  
ամմին տեղ լեցնող բուն լուսի՝ մէքեան ,  
փառքը մեզի փառք՝ է յարքայուն :  
Տեսանք քը շատ՝ ճքի վրան ,  
լոյս մը՝ կոյս անուն՝ համաստեղուն .  
իսկ հոս տեղ եղած՝ փառքը աննման ,  
է անպատմելի՝ մայր անապական :

Յովաչիմ ածահայր :

Ինձ կինկնայ դովել՝ զիմ պայծառ շուշան ,  
որ խըյմէթ գիտեմ՝ իր մաքուր փեսան .  
անթառամ ծաղիկ՝ էր ինձ պիտունական ,  
որ հիմա է դրախտ՝ նը արքայուն :

Առաջ սերովը է՝ էր ինձ վեցթեւեան ,  
բայց հրեշտակներու՝ տեսայ հոս սուլթան .  
շնորք նը հոգւոյն՝ ունէր եօթնարփեան ,  
հիմա փառք ունի՝ Յիսուսի նման :

Յովաչիմ Միքայէլ :

Քեզ ու միածնիդ՝ երկրպագուն ,  
կը նեմ մայր փրկչին , կուտամ դովուն .  
որ դեռ չի ծնած՝ տուի քեզ ողջոյն ,  
երկրպագելով՝ արքայիս իսկոյն :

Հոսալ եմ պատրաստ՝ աստղ առաւօտուն ,  
պաշտել ծառայել՝ իմ միշտ արեւուն .  
Յիսուսի , կուսի , գովեստներ սիրուն ,  
ձառքս խաչվառով՝ կարդամ ամմինուն :

Հրէւ

Գալուի ։ Հ ։  
Հրեշտակներ :

Հո՞ս ալ կարապետ՝ ըլլալ կուզես դուն,  
որ կընես ասանկ՝ ձայնապետութիւն.  
մեղ կինկնայ երգել՝ մեղ հրեշտակներուն,  
գովեատ նը կուսին՝ հետ ածորդոյն :  
Գիտցօղ ենք չափով՝ ատ մենծ խորհրդոյն,  
ի՞նչպէս մենծ բան է՝ բանին մայրուն .  
մէկ հատիկ մանսուակ՝ է յետ աստուծոյն,  
գերագոյն գլուխ՝ սա մեր ամմէնուն :

Մարդեկն :

Հապա դասապետք՝ նը հրեշտակներուն,  
առաջնորդ եղիք՝ մեղ մարդիկներուն .  
որ՝ նոր օրհնենքներ՝ տանք սիրուն սիրուն,  
մեր Յա փրկչին, և կոյս Տերամօրն :  
Թէ փրկեց ըլլար՝ մեղ գերիներուն,  
մենք ուր տեսնայինք՝ զայս արքայուն .  
թէ որ մայր փրկչին՝ չընէր գլխուն,  
մենք ուր գտնայինք՝ զայս ուրախուն :

ԶԻՆՆ Է Թ. Դ.:

Արդարներուն դրսի փառքը, և վարքին  
կեօրէ վարձքը :

Գ. ։

Կ նմարմինս ձեզի՝ մարմնով ազգակից,  
խօսիմ սիրելիք՝ ձեր հետ թէքլիֆսիդ:  
Ան՝ հոգի է, Հայր, Որդի, Հոգիս,  
կատարեալ ծայր մը, ծայր չեկայ մէկիս :  
Ե Զե

Չեղածը՝ եղած՝ ստեղծինք ողիս,  
առանց նիւթ բաներ՝ կարգ վերին դասիս :  
Անկատար ծայր մը՝ ըրինք ըզմարմինս,  
մարդը՝ երկուքին՝ մէջ տեղ՝ մասնակից :

Եւ ասոր համար՝ կեանք բանաւորիս,  
շատ բան կըքաշէր՝ ծայրէ ծայր կողմիս :  
Հոդին կըցանկար՝ վեր ելալ յերկինս,  
կարօտ համելու՝ իր աս բուն տեղիս :

Մարմինն հողեղէն՝ քաշողէր երկրիս,  
այնչափ՝ որ ձդեց՝ շատ անհոգ անձինս :  
Ըստհք որ ըլլար՝ մարդուս դործակից,  
ով կըդնար հանել՝ ճոշքը ճամբայիս :  
Սակայն յաղթողաց՝ ասանկ մենծ ճէնկիս,  
հարըս պատրաստեց՝ վարձըս արժանիս :  
մախսուս իս խաւրեց՝ օդնական հօտիս,  
սէրասկէր ըլլալ՝ բոլոր օռտուիս :

Ես որդի մարդոյ՝ նը ածորդիս,  
մարմնով յաղթեցի՝ իմ ձեր թշնամիս :  
Ետքը նոյն մարմնով՝ վեր ելայ յերկինս,  
որ փառօք մտնամ՝ իմ բուն հայրենիս :

Դուք ալ որ եկաք՝ ետևէն խաչիս,  
իծմով սէլամիթ՝ ելաք իմ որդիքս :

միւրվէթներ տեսաք՝ ներսէն ՚ի հոգիս,  
զանց տեսնելով, որ ծայր է փառքիս :

Անկից միւրվէթնէր՝ տաշխըն ՚ի մարմինս,  
ելաւ խազնայէս՝ երկնից արքայիս :  
հարկ համարակաց՝ հաւասար մէջլիս,  
արժանաւորաց՝ պատիւ կայ հարկիս :

Արդարները :

Փառք քեզ յաւիտեպն՝ փառաց թափաւոր,  
լ հ ո՞ր

Թ՞ ի ա տ ք ի հ ա ս ա ն ք՝ մ ա ր դ ի կ մեղաւոր ։  
 ա ն հ ու ն վ այ ե լ մ ա ն ց՝ հ ե տ զ ու տ հ ո գ ե ո ր ,  
 մ ա ր մ ն ո վ ա լ ե ղ ա ն ք՝ հ ր ե շ տ ա կ ն ե ր ն ո ր ն ո ր :  
**Մէյ մէկ ա ր ե ղ ա կ՝ ե ղ ա ն ք լ ո ւ ս ա ւ ո ր ,**  
 ը ս ա ծ ի դ ն մ ա ն՝ ի լ ա ւ ց ա թ ե ն ք կ ո ր .  
 ա ս ա ն կ դ է մ ք պ ա յ ծ ա ռ՝ ա ս ա ն կ տ ե ս ք ա ղ ո ւ ո ր ,  
 մ ը տ ո ւ ը ն է ս պ ի լ է՝ չ ե ր ա ն ց ն ե ր ա ն օ ր :  
**Ա ն չ ա ր չ ա ր ե լ ի՝ ո ղ ջ ա ռ ո ղ ջ բ ո լ ո ր ,**  
 մ ի շ տ ա ն ա պ ա կ ա ն՝ չ ի հ ի ն ն ա ր՝ մ ի շ տ ն ո ր .  
 բ ա ն ք ա շ ե լ չ ի կ ա յ , ց ա ւ ը ս ա ծ ն ի ն ո ւ ր ,  
 հ ա ն դ ի ս տ կ ա տ ա ր ե ա լ՝ ի ն տ ո ւ մ ե ր կ ն ա ւ ո ր :  
**Յ ո ք ն ի լ չ ե ն ք գ ի տ ե ր , զ բ օ ս ա ն ք մ ա ք ո ւ ր ,**  
 ա ն ո ւ շ բ ա ն ե ր է ն՝ օ ս ա ն ձ չ ի դ ա ր կ ո ր .  
 կ ա ր ո ղ ո ւ թ ի ն ի ս՝ ո ւ ր ա խ՝ զ օ ր ա ւ ո ր ,  
 զ գ ա յ ո ւ թ ի ն ի ս՝ մ ա յ լ ե ր է բ ո լ ո ր :  
**Շ ե թ ե ռ ւ բ ա ր ա կ՝ մ ա ր մ ի ն հ ո գ ե ո ր ,**  
 թ է զ ի կ կ ը վ ա ղ է՝ ք ա ն գ ու ն տ ե ր կ ն ա ւ ո ր .  
 ո ւ ր ո ր ո ւ զ ե ն ա ն ք՝ հ ո ն տ ե ղ կ ը լ ա ն ք կ ո ր ,  
 կ ա ն ց ն ի ն ք մ է կ ա լ դ ի ն՝ չ ի կ ա յ դ ի մ ա ւ ո ր :  
**Ո ւ ր տ ե ղ մ ի տ ք ը ս գ ա յ , կ ը թ ո չ ի մ ա ղ ո ւ ո ր ,**  
 հ ր ե շ տ ա կ ի ն մ ա ն՝ կ ը հ ա մ ն ի մ ա ն ո ր .  
 ա ս ա ն կ պ ա ր զ ը լ ա յ՝ մ ա ր մ ի ն մ ը բ ո լ ո ր ,  
 ա ն փ ո փ ո խ ո ւ թ ե ն ն շ ա ն է ա ն ո ր :  
**Տ ա վ է թ զ ի ա վ է թ հ ա ր մ ն ի ք ա մ մ է ն օ ր ,**  
 հ ր ե շ տ ա կ ք կ ը պ ա ր ե ն , ս ա զ ո ւ ձ ա ն ա ղ ո ւ ո ր .  
 հ ա պ ա զ ա ր դ ա ր ա ն ք՝ տ ա ն ք՝ փ ա ռ ա ւ ո ր .  
 ե ր կ ն ք ի մ ա տ է ն՝ ձ է վ ա հ ի ր ն ո ր ն ո ր :  
**Ա ն մ ա հ փ ե ս ա ն ի ս՝ ա կ ն է մ ա տ ն ե ւ ո ր ,**  
 դ պ ղ ը դ պ ղ ը ն ա յ՝ մ ե ր հ ո գ ւ ո յ ն բ ո լ ո ր .  
 ա ծ մ ա ր դ ե ղ ա ծ՝ մ ե ղ ն մ ա ն ա ւ ո ր ,

մ ա ր դ

մարդ ած եղած , մեզ փառք մասնաւոր :  
 Մենք որ ազգական՝ իրեն սեպուինք կոր ,  
 այ ազգ ենք՝ մօտիկ մօտաւոր ,  
 իր ուղած զարդով՝ սազած հողեւոր ,  
 հարս եղանք՝ մտանք՝ հարսնեց տուն բոլոր :  
 Պատկներ առինք՝ չեղած , փառաւոր ,  
 հագուստներ հագանք՝ անգին , նոփընոր :  
 մեծարեց՝ նստցուց՝ մեզ , մեր թագաւոր ,  
 արքան ալ նստաւ՝ մեր սիրտը բոլոր :

Հրեշտակներ :

Ո՞ւնք ալ անմարմինք՝ խնդակից կը լւանք ,  
 երք ուրախակից՝ մեզի ձեզ տեսանք .  
 մեր դասին պակասն՝ որ լցիք հիմակ ,  
 մենք ալ ձեզ իքրամ՝ կը նենք բացարձակ :  
 Դուք մեզի եղաք՝ յաւիտեան պարծանք ,  
 մենք ալ ենք պարծանք՝ ձեզ , որ էք մեր սանք .  
 տեսաք որ ի՞նչպէս՝ փառքերու հասաք ,  
 մեր խրատներուն՝ լուղ որ եղաք :

Հօր երկնաւորի՝ շատ են օժեւանք ,  
 տեսէք որչափ են՝ արձակ՝ մեր տեղունք .  
 սէտիր ու մանսուպ՝ բարձր աստիճանք ,  
 ձեր խելքէ 'ի վեր՝ լըման աննմանք :

Մէյ մէկ երլորդ էք՝ հոս անշարժականք ,  
 մէկ մէկէ փայլուն՝ կը լւան , չեն զարմանք .  
 ինչպէս որ նման՝ չեղան աշխատանք ,  
 իրարմէ տարբեր՝ եղան և խորանք :

Սէ թագաւորի՝ զաւակք սիրականք ,  
 ներսէն կը փայլին՝ ձեր փառք եղականք .  
 սըրմալը բանած՝ հողիներուն զարդք ,  
 են աղուոր աղուոր՝ սրտի զարդարանք :

Զեր ոսկի մաքուր՝ առաքինի վարք,  
 Են մէյ մէկ պայծառ՝ անուշահոտ վարդք:  
 Արծըթի նման՝ զամպախի ալ կարդ,  
 Հոս տեղ կըսեպունին՝ խնկանոց բուրվառք:  
 Յոյս հաստատ՝ ունէր, կենդանի հաւատք,  
 սէր՝ անմահ պտուղ՝ ձեզ բերաւ, տեսաք:  
 Բարեգործուեց՝ շահաւոր տաղանդք,  
 աւելի շահով՝ անցան հոս տեղունանք:  
 Հոգւով որ անդին՝ ապրեցաք աղքատք,  
 շատ խազնաներու՝ եղաք հոս ժառանդք:  
 Համբերութինիդ՝ յորայ նմանակ,  
 Հոգինիդ շահեց, շահեցուց շատ փառք:  
 Այ սիրոյն՝ ծառը, իրաւ կեանք,  
 տես որչափ պառուղ՝ տուաւ անհամբանք:  
 Եղայրսիրուն՝ նոյն ծառին ձիւղք տալք,  
 նայեցէք որչափ՝ բարեաց են պատճառք:  
 Աղքատսիրուն, ու դութ, նայեցաք,  
 ըրաւ՝ որ փրկչէն՝ սէր և գութ գտաք:  
 Իսկ խոնարհուք՝ ովլխոնարհ ծառայք,  
 ինչունան այ՝ գիրկ ելաք նստաք:  
 Թշնամեաց ներել, և աղօթք յստակ,  
 բարեկամ ըրաւ՝ այ, իիստ տաք:  
 Աշխրքի փառքն որ՝ առիք ոտից տակ,  
 թադաւորական՝ տուաւ ձեզի թագ:  
 Աշխարքի՝ մարմնոյ՝ խաչն որ ունեցաք,  
 խաչեալ յնի՝ փառացը հասաք:  
 Փորձուեց յաղթել՝ կտրիճ որ եղաք,  
 աչքի չի տեսած՝ առիք փառք պսակ:  
 Քանի:

Երկեք, քովս եկեք, աս ալայիս դէմ,  
 ձեք

Ճեր աշխատանքին՝ դիմացը ընեմ։  
 ալ ձեզ ծառայի՝ անուն տալու չեմ,  
 բարեկամ, եղբար, զաւակ՝ ձեզ դիտեմ։  
 Դուք ինծ մարդկօրէն՝ խզմէթնիդ ըրեք,  
 ես ածօրէն՝ խըսմէթ տամ հիմիկ։  
 դուք ինծ զաւկի պէս՝ ձեր պատիւն ըրեք,  
 ես ալ ձեզ հօր պէս՝ նայիմ, սիրելիք։  
 Դուք ինծ ողջակէղ՝ սրտերնիդ ըրեք,  
 ձեզ ալ ես՝ հոգիս՝ կըդնեմ, դիտցիք։  
 դուք ըզձեզ մոռցաք, ու զիս փնտուեցիք,  
 ես ալ իս կուտամ՝ ձեզ վարձք, իմացիք։  
 Առատ եմ սրտով՝ բնութ միշտ բարիս,  
 կուղեմ շատ ընել՝ ուրիշի բարիս։  
 չարերուն՝ զոռով չափեցի չարիս,  
 աղէկին կուտամ՝ իմ անչափ բարիս։  
 Մէկ մատի ծարով՝ ինծ մօտեցողին,  
 ես դիրկըս բացի՝ սիրովըս սրտին։  
 քիչ մը նեղուի՝ սիրով քաշողին,  
 ես փէշկէշըրի՝ իմ անքաւ բարին։  
 Թէ որ ամենուդ՝ դրի իմ սուֆրան,  
 որ մէկ տեղնստիք՝ իմ հետ յաւիտեան։  
 ամմէն մէկիդ ալ՝ զատ զատ մանսուպ տամ,  
 փառք պատիւ, պսակ, թէ ֆնէնու խուռման։  
 Համա Առաջնորդ՝ աշակերտք բանիս,  
 հընազանդ որդիք՝ ձեր վարդապետիս։  
 Հին աղերուն տեղ՝ փտտած խայըխից,  
 որ ըլլաք՝ բոլոր՝ անհուն խաղնայիս։  
 Աշխատանաց դէմ՝ ձեր քարոզուեն,  
 հանդցիք յաւիտեան՝ վերի խաթ իմ տան։  
 փոխանակ մահունան՝ մարտիրոսուեն,

պսակներ փայլին՝ ձեր գլխուն վրան :  
**Մ**արդարէս, պատմօղք՝ դալստեան բանիս,  
 հին աշխատաւոր՝ մշակներ էղիս .  
 ձեր վարձքը առէք՝ լրման ըսածիս,  
 թագաւորական՝ սիկքէն երեսիս :

Քրտինք շատ ունիք, չեմ մոռնար ես զան,  
 անոր տեղ մենծ մենծ՝ փայէներ ձեզ կան .  
 ամմէն մէկերնուդ՝ վախճան զանազան,  
 պատրաստեց ձեզի՝ աննման խափտան :

**Վ**արդապէտ, հովինք՝ արծօղք իմ հօտիս,  
 գործքով նմանօղք՝ ինծ մենծ չօպանիս .  
 ահա անթառամ՝ անմահ պոակիս,  
 արժանի եղաք՝ լման խոստմունքիս :

**Ա**ռէք զարդ դլխու՝ վարդապետական,  
 գովասանք պէսպէս՝ ու հրեշտակական .  
 փառաւոր մատնի՝ ոսկի գաւազան,  
 առէք իմ ձառքէս՝ անուամք օդնական :

**Հ**այրառէտ, պարծանք՝ իմ ոք տաճարիս,  
 իբրև փոխանորդք՝ հօր երկնաւորիս .  
 առջի նահապետք՝ հետ իմ նոր կարգիս,  
 ծաղկեալ գաւազանք՝ նոր ահարոնիս :

**Ա**թոռներ դրած՝ ձեզի համար կան,  
 յերկնային տաճար՝ ձեր պատուիցն արժան .  
 ակնեղէն բանած՝ թաղեր աննման,  
 ոք սիրով սազած՝ շուրջառ ձեր վրան :

**Մ**արդիրոս, վկայք՝ իմ ճշմարտութեն,  
 անվախ կորիճներ՝ մենծերուն տիվան .  
 յաղթօղ՝ իմ ասկէք՝ աշխրքիս մէյտան,  
 ուր մնաց ռք, մարմին, սատանան :

Պարծանք էք դլխոյս՝ ամմէն մէկ անդամ,  
 ես

Եսալ ձեր գլխուն՝ աղուոր պասկ տամ։  
Խուռմայի ձղեր՝ կանանց յաւիտեան,  
առէք ձեռուընիդ՝ յաղթուն նշան։

Արուն թափեցիք՝ իմ հետըս այնքան,  
Ես ալ խրմցընեմ՝ բաժակ սիրական։  
Ճտերնիդ կապուած՝ էր զինճիլ, չուան,  
անդին կէռտանըս՝ կապեմ յաւիտեան։  
Գլուխնիդ տուիք. թագ առէք վրան։

Չարդուբուրդ եղաք, զարդ տամ աննման.  
Կրակէ ջրէ՝ բիւրք անցաք՝ այսքան,  
բիւրաւոր վէրքի՝ վարձք կայ բիւր անդամ։

Կուսանք լուսաւորք՝ պայծառք՝ ի հոգին,  
մաքրութք մախպուլ՝ հոգեսոր փեսին։  
Բուն լուսոյն մէքեան՝ ըլլայ ձեր տեղին,  
եկէք էտևէս՝ անարատ գառին։

Պայծառ հաղուստներ՝ տամ ձեր նը սրտին,  
իմ հօրը դիմաց՝ հանեմ ամմէնքնին։

ըլլաք ընտանի՝ մօտ առ նը հոգին,  
տանըս մէջ ըլլաք՝ իժիր անուանին։  
Ճ՛կնաւորք, հսկողք՝ ինչպէս անմարմին,  
ուրախսիրտ տանօղք՝ ամմէն դժարին։  
ձեր հոգւոյն հնաղանդ՝ ըրիք ըզմարմին,  
զաւակքիմ հնաղանդք՝ խուռապանք իմ ուղին։

Իրեք պսակով՝ թագ կայ ձեր դլխին,  
կուսի, վկայի, ու փէհլիվանին։

աշկերտ որ եղաք՝ արժան էք դասին,  
իմ նը մկրտիչ՝ մեծ կարապետին։

Աշխրքիս ծովէն՝ ելած բարիքներ,  
աշխրքի մշկն՝ դաս դաս արդարներ։  
թէ էրիկ մարդիկ, և թէ կնիկներ,

ծեր ու տղայ ընտրած՝ ըռինտ ոչխարներ :  
 Եկէք հանգչեցէք՝ իմ հետ՝ յոդնածներ ,  
 ինչպէս որ հանգիստ՝ ինծ տալ՝ ձեր կամքն էր .  
 արժանի գործքին՝ ամմէն մէկին ձեր ,  
 իմ սարայիս մէջ՝ առէք խրսմէթներ :  
 Ձեր վարքով՝ շահօղք՝ իմ սէրմիէյիս ,  
 խաթ խաթ հոս առէք՝ շահով շատ բարիս .  
 Ճրագ իմ սիրովա՝ վառեցիք սրտից ,  
 ես ալ իմ սիրուս՝ չափը ցըցուցից :  
 Մարմնով՝ աշխրքի , հոգւով՝ դէպ յերկինս ,  
 կեանք մը ունեցաք՝ նման իմ կեանքիս .  
 տէ հրեշտակներուն՝ եղիք դասակից ,  
 միշտ այ հետ՝ էք յաւիտենից :

## Զ Ի Ն Ն Ե Թ Ե :

Մէջիս ուրախութեն սբց՝ իրարու հետ :

## Հ Ր Ե Ղ Փ Ա Հ Ն Ե Ր :

Զ այնապէտք երկնից՝ գըլուխք ինն դասին ,  
 իններորդ ձանով՝ ըսէք ըստեղին .  
 Վեր եկած մարդկան՝ տասներորդ՝ հախին ,  
 կատարեալ թունով՝ ձան ըլլայ տասին :

## Հ Ր Ե Ղ Փ Ա Հ Ա Պ Ե Փ Ա Ն Ե Ր :

Յ արմար ալ կու գայ՝ դաւթի տասնաղին ,  
 հնուց եղանակ՝ սաղմոսարանին .  
 Հ ա պ ա ով դաւիթ՝ զարդ այս մէջիսին ,  
 չալէ մեզի հետ՝ քու մէնշիւր չալղին :

Դաւիլ Տարգարէն :

Հայ հայ , ատենն է , ժամ է՝ ու տեղին ,  
ժամ ըսել ձեր հետ՝ երդ հրեշտակային .  
ուր որ օրինակ՝ չիկայ այն մեր հին ,  
հապա ինքն ած , սբ կոյսն ալիմ դին :

Այս օրս է ցորեկ՝ միշտ յաւիտենին ,  
որ ըրաւ ած , խնտանք իր տօնին .  
ուրախ ձան կուտան՝ տըներ արդարին ,  
ծափ զարկէք արդարք՝ ծառեր անտառին :  
Մէկ հատիկ պարգև՝ կուզէի մինակ ,  
հոս գտայ բուն տեղն՝ ածաբընակ .  
սբ տաճարի մէջ՝ նստելով՝ ի բակ ,  
տեմնալ միշտ աղուոր՝ իր կանոնն ու կարգ .  
Հըրաման ալ տալ երդելու , եղբարք ,  
որ միշտ անդադար՝ տաք այ փառք .  
հապա օրհնեցէք սրտանց՝ ու տաք տաք ,  
անուշ երդերով՝ հոս բոլոր մէկ աղգ :

Հրեշտակիներ :

Զայնակից եղիք՝ դուք ալ ով սբ հարք ,  
շարական շինողք՝ բանաստեղծք ձարտարք .  
դլուխ երդողաց՝ մեսրոպ և սահակ ,  
և մովսէս քերթող՝ քերթողաց պարծանք :  
Բաց ով շնորհալի՝ քու քերանդ անփակ ,  
մեզ հրեշտակներու՝ շինող եղանակ .  
և նարեկացի՝ իրաւ որ հրեշտակ ,  
դերմանոսին հետ՝ ոռմանոս ջուխտակ :

Մարտի :

Վվ զարմանալի՝ երկնային վիճակ ,  
և հիանալի՝ երկնից ժամու կարգ .  
ուր լաած էինք՝ աշխարք՝ եղանակ ,

գոնէ հեռը անց՝ ասոր նմանակ :  
 Աս տեղաց չալզըն՝ չէ ձառքի շինած,  
 հապա հոգեղէն՝ աննիւթ, օրինած .  
 մայլելու բաներ՝ բուն սրտի ուղած,  
 ծովու պէս փափաք՝ ասով կայ լցունած :

## Ուրեները :

Աս ի՞նչպէս մէջիս՝ է, արմանք զարմանք,  
 ո՞րչափ գեղեցիկ՝ ճիւմպիւշ է, եղբարք .  
 Երկինք և երկիր, հոս մէկ տեղ եկանք,  
 հարսնիք մը ունինք, չիկայ օրինակ :  
 Չիննէթն որ ըսես՝ խելքէ դուրս բարակ,  
 մէջիս նստողներ՝ բոլոր բոլորակ .  
 ամմէնքը բիշալ՝ ենք հոս բովանդակ,  
 ոք թաղաւորին՝ որդէղիր զաւակ :

## Մէկ :

Հապա՝ չես ըսեր, սէր եղբայրական,  
 ի՞նչպէս կրփայլէ՝ մեր մէջ միաբան :  
 առաջ անծանօթ՝ ազգ ազգ դանազան,  
 հոս եղանք ծանօթ՝ սիրուն ազգական :  
 Հեռու ըսածնին՝ մօտ խըսըմ եղան,  
 մեր մօտ եղածնիս՝ ալ սրիս կապունեցան .  
 Տիչ մէկը չիկայ՝ հոս օտարական,  
 սիրով հարումար՝ քուր ախպար եղան :

## Մէկաւ :

Աղէկ մը նայէ, ուր ըլլայ քու կամք,  
 այնչափ ախրապայ, որչափ մարդիկ կամք .  
 Տիչ չես հարցըներ, ով են այս արդարք,  
 քեղնէ կրծանընաս՝ սանքի գլխուդ թագ :  
 Գիտես, սա աղամ, նա եւայ, յստակ,  
 ասոնք՝ սէթ և նոյ, անոնք՝ նախ ահորք .

Արտայուն սկիզբն է : 123

առաքեալք յայտնի՝ մէյ մէկ բարեկամք,  
սա ալ ստեփանոս՝ պայծառ ու պատկ :

Մէնալ :

Ես ալ մկրտչին՝ ունէի փափաք,  
տեսանք մէկըզմէկ, փառք այ՝ փառք.  
մէր լուսաւորչայ՝ երեսը տեսանք,  
որդւոց և թոռանց՝ կարօտով լցումանք :

Մէրն է սբերուն՝ բոլորը՝ մէկ ազգ,  
ամմէնը մէկ սօյ՝ մէկ ճինս հասարակ.  
մէկ սիրտ՝ մէկ հոգի, մէկ սօյ՝ մէկ հասակ,  
սրտանց սրտակից՝ իրարու եղանք :

Ուրիշներն ալ :

Ուստի բաժնը ած՝ լեզուներ անկարդ,  
նորանց մէկ լեզու՝ մէկ նոր աղջ եղանք.  
ուր որ ամմէնքնիս՝ մէկ հոգի հադանք,  
ամմէն մէկ լեզուի՝ վարպետ գրուեցանք:  
Ո՞ր լեզու կուղենք, զուրցենք համարձակ,  
ի՞նչ լիսան կուղենք, ստեղծենք արձակ.  
հրեշտակի լեզու՝ աղէկ սորվեցանք,  
ենք մտօք՝ կամօք՝ պիւլպիւլ անուշակ :

Ասով այ՝ առաջ փառք կուտանք,  
սբ հրեշտակներու՝ դասակից եղքարք.  
Ետքը իրարու՝ կըպատմենք ուրախք,  
անցած ու դացածն՝ որ խալքուեցանք:  
Բայց և ս առաւել՝ ի՞նչ որ հոս տեսանք,  
յաւիտենական՝ երջանիկ վիճակ.  
որ է անփոփոխ՝ վայելմունք ու կեանք,  
աստուծոյ, անհուն՝ ծովին տեսարանք :

ԶԱՅՆ

## Զ Ի Ն Ե Թ ։ Զ:

Երկնային դրախտին աղունորուիլը ,  
ու երկնքին մենծուիլ :

## ԱԲ ածածին :

**1** Ադամնախահայր , դուն որ դրախտ կեցար ,  
անոր քով , ըսէ , աս ի՞նչպէս տեսար .  
որ քեզ և որդւոցդ՝ տուաւ հաւասար ,  
իմ ածորդիս , որով հոս հասար :

## Աշամ :

Ի՞նչ կըսես , ով կոյս՝ ոք ածածին ,  
իսելքէ դուրս բաներ՝ են գործք միածնին .  
Դըրախտ երկրաւոր՝ շուք էր պատկերքին ,  
ասոր փառքին քով , որ լոյս է մտքին :  
Հոն երևելի՝ երկու ծառ կային ,

կենաց , ու գիտել՝ ըզքարն ու բարին .  
Հոս ինքն ըստեղծօղ՝ կեանք բոլորովին ,  
գիտութիւն ալ ինք՝ ամենաբարին :  
Հոն ծաղիկ , պտուղ , շատ աղունոր էին ,  
աչքի ու բերնի՝ խըզմէթ՝ բաներնին .  
Հոս եղածներէն՝ հոգին ու մարմին ,  
շատ շատ էւելօք՝ անչափ կըմայլին :  
Հոն թուզուններով՝ ուրիշ կենդանին ,  
գեղեցիկ տեսքով՝ մեղ մօտ կուգային .  
Հոս տեղ սերովքէք՝ քերովքէք վերին ,  
իսելքէ դուրս աղունոր՝ խօշ կուգան սրտին :  
Ի՞նչ համրեմ մէյ մէկ՝ թէմէլոիդ բարին ,

ամն

անցաւորն անցաւ՝ հետ յանցաւորին .  
Հոս ի՞նչպէս պատմեմ՝ ես անպատմելին ,  
անանց մենծուի՝ սառյդ խաղնային :

**Ս**ուտ է ասոր քով՝ շենք սողոմոնին ,  
սուտ են մեծամեծ՝ բաներ աշխարին .  
այս այ տուն՝ մեր ըստեղծողին ,  
աղեկին՝ զամմէն աղեկ՝ տուղին :

**ՄԵ** ածածին :

**Ե**լիք մայր եւայ՝ քու զաւկըներով ,  
ժուռ եկուր աս նոր՝ դրախտ սէֆայով .  
բոլորն հասկըցար՝ արմընցար՝ մտքով ,  
զբօսանք ելիք՝ նաև ոք մարմնով :

**Եւայ :**

Իրաւ , կոյս և մայր , մէկ հատիկ սուլթան ,  
ասիկ ինծ մոռցուց՝ դրախտին պախճան .  
աղունոր ծառերուն՝ շուքը չէր մենծ բան ,  
ասոր քով՝ ասանկ լուսեղէն ոք տան :

**Ի**նչ ընեմ ան տեղ՝ ջրէ ջաղլաղան :  
Հոս արեգական՝ տեսայ շատրրվան .  
ի՞նչ պիտօր ըլլայ՝ թռչուններու ձան ,  
Հոս որ կըլըսեմ՝ երկնից շարական :

**Ա**յն թռչուններուն՝ այն աղունորուն ,  
յաղլթեցին աղունոր՝ զաւակքս աննման .  
ասոնց մէկ հատին՝ աս դեղեցկուն ,  
հազար դրախտներ՝ չեն համնիր լըման :  
**Ա**նուշ պտղոց դէմ՝ որ հոն տեղ կային .  
անհուն քաղցրուի՝ կայ հոս ՚ի հոգին .  
հապա քու անուշ՝ երեսդ , իմ լուսին ,  
ինծ կեանք է անմահ , որ հոն չեկային :

**ՄԵ**

## ԱՅ ածածին :

Դուն ալ յովհաննէս՝ աւետարանից ,  
աշխըրքի վրայ՝ երկնից նկարից .  
նայէ իրարու կը լմանի՞ն մի հիջ ,  
քու միւսէվէտէդ , ու ամը , շատ՝ քիչ :

## Յովհ + աւետարանիչ :

Չիյտեմ , ի՞նչ ըսեմ , ասանկ մենծ բանին ,  
ուրիշ է քաշուածք , ուրիշ՝ կենդանին :  
Ճոն ոսկի արծաթ՝ պատիւ ունեին ,  
անունը մենծ էր՝ քարին , մարդրտին .

Ուստի օրինակ՝ անկից կուտային ,  
տեսիլքիս խօսքերն՝ իր կարդացողին :  
Իսկ հոս խելքէ վեր՝ են զարդք երկնային ,  
որ երկնից լուսով՝ արդարք կընային :

Ես ալ տեսնալով՝ հոս աչքիս դիմաց ,  
նոր իսպաթ կընեմ՝ իմաստուն խելաց .  
աշխըրքի տարերք՝ չորս էր ստեղծած ,  
որ հազար բանի՝ նիւթ էին եղած :

Հոս որ՝ անհուն է՝ աննիւթ պատրաստած ,  
ի՞նչպէս շատ ըլլան՝ զարմանք դերազանց :  
Անհամար տառեր՝ իրարու կապուած ,  
ան ի՞նչ բան կը լսյ՝ այ գրած :

Ոսկի է ըսենք՝ մեր ոտքին կոխած ,  
պատերն ու դռներ՝ գոհար մարդարտաց .  
ծածքին ի՞նչ անուն՝ դնենք չի լսուած ,  
տան զարդարանքին՝ ի՞նչ անուն կուտաս :

Մարմիննիս՝ նման է արեգական ,  
հոդինն նման՝ ի՞նչ կայ պիտուական .  
քեղի ով նը կոյս՝ ի՞նչ դտնանք նման .  
հապա այ՝ ուր օրինակք կան :

Ո՞ր խելք կըհասնի՝ երկնից մենծուն,

այ քաղքին՝ ընդարձակուն,

ով է չափն առեր՝ աս մենծ պալատան,

այ սարայն՝ թը առքայուն :

Թող դաւիթ անյաղթ, ու աքունացին,

ուկի կանոնով՝ նոր հիսապ նստին.

մարդկային հին չափ՝ հոս չիգար բանին,

կանդուն ափ առնեն՝ չափ հրեշտակային:

Դռաւիլ անյաղթ գիշեառիայ:

Խ՞նչ կըսես թովմաս, ելանք տեսնալու,

աւետեաց երկրին՝ չափմը դիտնալու.

բարձըր ու խորունկ՝ է առանց չափու,

լանքնալ՝ երկանքնալ՝ նոյն չափ է կանդնոյ:

Ամմեն կողմ հաւսար լրս լրման դարին,

կատարեալ ձենալ՝ դունտ կըլորակին.

հաւսար՝ անհաւսար՝ դործ ստեղծողին,

որու չէր հասնէր՝ խելք մեր աշխրքին:

Թորմա տքունիացի:

Ով իմաստասէր՝ մեր վերին դասին,

իրաւ որ հասանք՝ մենք մենծ մանսուպին.

չափն ալ հասկըցանք՝ հոս տեղ հրեշտակին,

բայց չէ կարելի՝ դիր մը հիսապին:

Ե՞կ խօսքով ըսենք՝ մենծին պղտըկին,

եկէք ու տեսէք՝ անհասկընալին.

հասկացողուի՝ այ գըքին,

աստուծմէ՝ պիտո՞ր տպունի՝ ձեր մոքին:

Դռաւիլ անյաղթ:

Գոնէ օրինակ՝ մը՝ տանք ուղողին,

նայէ վերէն վար, ի՞նչ բան կերելին.

ահա մենծութի՝ մեր հողագունոին,

կէտ

կէտ մը կերևնայ՝ չերևնար աչքին .  
Անոնց քով աստեղք՝ են մենծ մենծ մարմին ,  
հարուր կամ հազար՝ անդամ աւելին .  
հապա ի՞նչ կըսես՝ բոլոր երկնքին ,  
ուր ան աստղըներ՝ կէտ մը նեն չնչին :

### Մ' ԽԵՒ-ար Աբբայհայք :

Ասէ հայր անտոն՝ ինծ քու աշկերտին ,  
քու պատուոյ անուամբ՝ կոչուած աբբային .  
աս ան կէտ է մի՝ մեր հին աշխրքին ,  
ուր խարիս նստանք՝ ձեր եղիպտոսին :  
Մենծ բան կերևնար՝ խարան հետ ծովին ,  
երբ արևելքէն՝ կերթայի մուտքին .  
հիմա հեշտ կերթանք՝ չորս դին երկնքին ,  
որու քով աշխարք՝ տամլայ չէ ծովին :

### ԱԲ Անգն Աբբայ :

Բայց այն էր՝ իրաւ՝ շատ զարմանալին ,  
որ մարդիկ՝ ծարաւ՝ էին տամլային .  
տամլային տամլան՝ խմել կուղէին ,  
չէր պաղըշտըկեր՝ անով ծարաւնին :  
Փշրանք փշրանքէ՝ բաժին կառնէին ,  
կշտանալու տեղ՝ անօթի կային .  
խենդերը՝ անոր ուղրին՝ կորուսին ,  
աս անհուն բարեաց՝ խաղնան քանց ծովին :

### ԱԲ ալանաս հայրապէտ :

Դուն ոք հարանց հայր՝ առջինը եղար ,  
խելացի գլուխ , ո՛րչափ ճգնող կար .  
Ճանչնալու՝ ինչ է , կամ չէ աս աշխար ,  
ինչ է վերն երկինք , ինչ երկիր 'ի վար :  
Երկիր , Ճամբորդի՝ խարիսխ յարմար ,  
երկին՝ հայրենիք , բուն մեր տեղն՝ որ կար .

Ը

ինչ

Արքայուն սկզբը . Է : 129  
ինչպէս որ դրած՝ մը վարքիդ մէջ , հայր ,  
յիշատակ ըրի՝ մարդկանց բանավար :

Կոստանդիանոս հայր :

Ով տրդատ եղբայր՝ իրաւ կըխօսին ,  
մը հարք խելացիք՝ դիտցողք աշխարքին .  
որ փախաքելով՝ ափ ձգել զերկին ,  
աշխրքիս մէջն ալ՝ զաշխարք թողուցին :  
Դուն ալնայելով՝ անոնց ըրածին ,  
թագըդ վար դըրիր՝ ճգնիլ՚ի լերին .  
Ես ալ փառք կուտամ , որ ասըլ սրտին ,  
խաղնա չունէի՝ զաշխարք , այլ՝ զերկին :

ՏՐԴագ թագաւոր :

Ատ իրաւ ըսիր՝ եղբայր իմ անդին ,  
հոս մեղ թագ դրաւ՝ հոն թողուլ թագին .  
Բնչշահ՝ աշխրքիս՝ մենծին , կայսերին ,  
անցաւորի հետ՝ իրենք ալ անցին :  
Մէկ պզտիկ նօխտան՝ շատ կտրտեցին ,  
կոռուելով մարմնով՝ հոգին կորուսին .  
թէ կտրիմ էին , իրենց խլէին ,  
աւաղակին հետ՝ զաս դանծ երկնքին :

ԱՐԴէ հայրապէտ :

Ատ մենք առաջուց՝ քարոզողք բանին ,  
շատ շատ կանչեցինք՝ շատ խուլ անկըմին .  
բայց վովէր լսող , անկած չի դըրին ,  
մեղ զէֆքի առին , ու հալածեցին :

ԱՔԳար թէր :

Մենք վարձքը առինք՝ մեր աշխատանքին ,  
իրենք ալ դտան՝ իրենց պատիմնին .  
մենք այլ փառք՝ տանք կրկին կրկին ,  
որ չարէն պրծանք , դըտանք ըզբարին :

(Ծ) i

ԶԼՇ

Զ Ե Ւ Ե Ե Թ Ե :

Յաւիտենից ուրախութիւն  
սբց :

**Աֆ:**

Յաւիտենական, յաւիտենական,  
ես եմ առ ած՝ յաւիտենական.  
Ես եմ, ալ չեկայ՝ ած յաւիտեան,  
ոչ ըսկիզբ ունիմ, և ոչ ըզվախճան:  
Ձեզ ալ ես ըրի՝ մնալ անվախճան,  
որ եմ ձեր ըսկիզբ, և նոյն՝ ձեր վախճան։  
Մէջ, ուրախ կեցիք՝ իմ հետ յաւիտեան,  
հասնելէն էտե՝ աս երանութեն :

Հրեշտակ :

Յաւիտենական, յաւիտենական,  
ած մեր և առ՝ յաւիտենական.  
Քեզնէ՝ եղածնիս եղանք՝ ըսկզբան,  
և քեզի ընկանք՝ պահել ըզքու բան։  
Ըսորքով մենք հասանք՝ փառքիս մենծուեն,  
որ քեզ միշտ փառք տանք՝ ած յաւիտեան։  
անհուն գոհութի՝ սբ երրորդութեն,  
քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ միայն։  
Յաւիտենական, յաւիտենական,  
դուն ես մեր պարծանք՝ յաւիտենական։  
Փառքիդ կըցընծանք՝ ով փառք աննման,  
ձառքէ չելալու՝ անհուն մեր խաղնան։  
Աս ի՞նչ վայելմունք՝ ածանըման,

Արքայութեական բառ է : 131

որ քու ըստեղծածդ՝ մնայ քեզ նման •  
իրաւ կըվայլէր՝ տէր, քեզի միայն,  
ասանկ բան ընել՝ անշափ յաւիտեան :

Յաւիտենական, յաւիտենական,  
կեանք ուրախական՝ յաւիտենական,  
ծով մը ահագին՝ մենծ քան զովկիան,  
լեցուն բարիքով՝ կեանք մը յաւիտեան :

Անհատնում բխած՝ աղբիւր բարութե,

լեցրնօղ սրտի՝ եղած բնութե.

Երդ ընենք հրեշտակք՝ անդադար զաս ձան,  
փառք քեզ առ ած՝ յաւիտենական :

Մարդեկ :

Յաւիտենական, յաւիտենական,  
բնչ ըսենք, բնչ է՝ այս կեանք յաւիտեան.  
մնալ կենդանի՝ այ նըման,  
եղածն՝ ընողին չետ՝ հաղորդական :

Ափէ չելլալու՝ գանծ փարթամութե,  
գտանք, վայելենք՝ մարդիկ յաւիտեան.  
անվախ ապահով՝ անկորուստ մենծ բան,  
որ ենք փրկըւած՝ երնէկ յաւիտեան :

Յաւիտենական, յաւիտենական,  
բնչ ըսել է առ՝ յաւիտենական.  
աշխրքիս մէջն ալ՝ կըլըսուեր աս ձան,  
բայց հիշ չեր հասնէր՝ աչք տեսնալու զան :

Փառք քեզ առ ած, որ հասանք լըման,  
վայլելու, ինչպէս՝ աք գիրք խոստացան.

մշանջենաւոր՝ յաւիտենական,  
քեզ փառք կըվայլէ՝ առ քեզի միայն :

Յաւիտենական, յաւիտենական,  
ով արքայութե՝ յաւիտենական :

անհուն բարիքէդ՝ մէկ կաթիլ միայն ,  
անհուն ծով կըլսայ , զի է յաւիտեան :  
Հապա ի՞նչ ըսենք՝ քուկին մենծութեն ,  
ամմէն բարիքով՝ լեցուն յաւիտեան .  
դու ես տը ած՝ յաւիտենական ,  
մեր արքայութի՝ յաւիտենական :  
Յաւիտենական , յաւիտենական ,  
թագաւորութի՝ յաւիտենական .  
ի՞նչպէս խըյմէթիդ՝ գիտողը քիչ եղան ,  
շատն որ կոչուեցան , քիչ ընտրուեցան :  
Պատմա ըլլայիր՝ նէ , 'ի սիրտ մարդկան ,  
քեզ կըհասնէին՝ ամմէնքը լըմսն .  
քեզ միտք բերելու՝ որ անհոգ եղան ,  
վայրկենականով՝ գացին վար ընկան :  
Յաւիտենական , յաւիտենական ,  
կեանք անպատմելի՝ միշտ անմահութեն .  
մենք ուսկի՞ էինք՝ աս բանիս արժան ,  
որ ելլանք՝ 'ի քու բարձր աստիճան :  
Միշտ վեր վերցընօղ՝ խոնարհաց միայն ,  
իր ձառքով բոնեց՝ հանեց աս խորան .  
իրեն բարձր փառք՝ իր բուն բարձրուեն ,  
կըվայլէ փառօք՝ միշտ և յաւիտեան :  
Յաւիտենական , յաւիտենական ,  
ով երանութի՝ յաւիտենական .  
երնէկ է մեզի՝ եղըարք յաւիտեան ,  
որ կանք անփոփոխ՝ կեանք երանական :  
Աս երջանկութք՝ միշտ երանութեն ,  
երանի մեզ տանք՝ յաւիտենական .  
որ շիտակ ճամբով՝ ութ երանութեն ,  
հասանք՝ 'ի վերջին՝ կէտ երանութեն :

Յաւիտենական , յաւիտենական ,  
փառք քեզ արարիչ՝ յաւիտենական .  
փառք քեզ [թագաւոր՝ յաւիտենական ,  
փառք քեզ բարերար՝ փրկիչ յաւիտեան :  
Դուն միայն պատճառ՝ մեր երանութե ,  
միայն երանեալ՝ ի բուն քու բնութե .  
Եղունի տեղ՝ հոգւով՝ կարդանք յաւիտեան ,  
աս հրեշտկցս հետ՝ քեզ փառք յաւիտեան .

Ամէն :

ՎԵՐՋ . ՈՐ ՎԵՐՋ ԶԱԵՆԻ :





## ՀԱՌԱՋԱՆՔ

Բալր սրբանց :



Եյն որ գրեց, այն որ լսեց՝ չորս ետքեր-  
նիս՝ ծայրէ՝ ի ծայր,  
մէկ բերանով՝ կըպաղատինք՝ քեզ տէր ած,  
ըստոյդ մեր հայր :

Փուժ տեղ ըըլսայ՝ մեր աշխատանքն, որ քու-  
կամացդ՝ գիտենք յարմար.  
ախ, պօշ չերթայ՝ ոք միածնիդ՝ քաշածները՝  
մեզի համար :

Ինչո՞ւ եկաւ, ու մարդ եղաւ, մեզ հասկը-  
ցուք՝ տէր բարերար.

Ծէ որ ասանկ՝ մենծ բաներ, որ՝ տեղեկա-  
ցանք, պատճառ ըըլսար :

Մահը բառնալ, ու կեանքը տալ՝ ննջեցե-  
լոց՝ որ յամմէն դար.

Դատաստանով՝ բուն հախը տալ, ամմէն մէ-  
կուն՝ ընկածն արդար :

Հանգա ի՞նչպէս՝ մենք թմրեր ենք՝ մահու-  
քընով, քան հոգեվար.

ու չենք վախնար՝ հոգւոյն մահէն, որ կը-  
տանի՝ դժոխքն ի վար :

ՉԵՆՔ

Չենք արթըննար՝ պտուղ բերել, որն որ  
կուզէ հաւատքին ծառ.

որ արժանի՝ արքայութե՛ ըլլանք, ինչպէս՝  
որ խոստացար :

Արդ կազաշենք, հայր երկնաւոր, մեզ պար-  
դեւէ, կըլլանք եալվար,

հոգւոյդ սրբոյ շընորհքներէն, միշտ անհատ-  
նում և անըսպառ :

Տպաւորէ մեր սրախն մէջ՝ սէր ու կարօտ՝  
վերի աշխարհ,

որ դանք մտնանք՝ մեր հօրը տուն, սուրբե-  
րու հետ՝ կալ անդադար :

Եսը սիրու մը տուր՝ նոր մարդ ըլլալ, նման  
փրկչին՝ մեր կենարար .

Հոս տեղ վարքով, հոն տեղ փառքով՝ աղ-  
ուոր փայլիլ լուսապայծառ :

Դրու առ պահէ, որ չի կապուինք՝ աս աշ-  
խրքիս՝ կեանքին խաւար,

մեր մութն'ի մութ մտքով չերթանք՝ մարմ-  
նոյ խելաց հետ հաւասար :

Մի թողուր որ՝ գերի ըլլանք՝ փուճ բանե-  
րու՝ աշխարավար,

որ ատեննիս ու կեանքերնիս՝ կըփնացնէ,  
կըդնէ վար :

Փորձանքներէն մեղ խալըսէ, զոր սատանան  
կըբերէ չար .

Փորձութին ալ՝ համբերութե մեղի ըրէ բա-  
րեաց պատճառ :

Աւ նայիլ տուր աս մեր աչքին՝ ետքը նայիլ  
ճամբուս դըժար .

քեղի

քեզի քաշէ մեր սրտերնիս, որ քու սիրովն  
ըլլայ միշտ վառ:

Հասցուր ըզմեղ սիրուն տեսուդ՝ փափաքելի  
տեսիլ անձառ.

տուր որ վայլենք՝ քու պատրաստած ար-  
քայութեղ՝ մեզի համար:

Փառաւորենք՝ զամենանք երրորդութիւնդ,  
լոյս հրաշափառ.

Հայր և Որդի և ոք Հոգի, ոք ոք ոք Տէր,  
ահը պարզաբար:





